

խացնում է, որ դու Նինոյին այնպիսի մարդ ես որոնում, որ կարողանայ նրան բարեացակամ ընկեր դառնալ և քո պապենական ժառանգութիւնը չանհետացնել: Սրբ որ մի կամուրջ եմ շինում, պէտք է այնպէս շինել, որ մեր յաջորդներն էլ կարողանան նրա վրայից անց ու դարձ անել:

«Ձէ, ոչ ոք, բացի Լեւան Ձիգանուց նրան աւելի արժանի չէ», ինքն իրան մտածում էր ծերունի Վարդապետիձէն և այս միտքը այլևս նրան հանգիստ չէր տալիս: Նա միշտ կրկին այդ մտքին էր վերադառնում և երբ Նինոյին տեսնում էր, նրա մտքի առաջ կանգնած էր լինում նաև Ձիգանու պատկերը: Իւր այս գիտաւորութիւնների մասին որդուն դեռ ևս ոչինչ չէր ասել, որովհետև գիտէր, որ նրան համոզելը հեշտ բան է: Աւելի կարևոր էր Նինոյին քննել և իմանալ, արդեօք նրա սիրտը Տրփիսիսում հօ չէր մնացել: Նա վճռեց այսօր իսկ այդ քայլն անել:

Այն ինչ նա իւր երկար ծխաքարշը բերանին բազմոցի վերայ նստած իւր նախագծի իրականացման մասին էր մտածում, կանանց խօսակցութիւնը մի ակնթարթ անգամ չընդհատուեց: Նինոյին հարցութիւններ էին անում այն ամեն բաների մասին, ինչ որ նրան էր վերաբերում, բայց սա շատ հազիւ ստիպուած էր լինում մենակ պատասխանելու, որովհետև համարեա միշտ այս կամ այն տիկինը օգնութեան էր հասնում նրա ասածներին, որևէ բացատրական նկատողութիւն իւր կողմից աւելացնելով: Ոչ ոք չէր կամենում ուրիշից պակաս կրթուած երևալ, բայց այնուամենայնիւ նրանք շարունակում էին միմեանց հարցութիւններ անել և հետաքրքրութեան մէջ միմեանցից աւելի նորութիւնների կարօտ էին: Նինոյի կեանքից ոչ մի հանգամանք նրանք չթողին առանց շօշափելու. միայն թէ առանց երկար կանգնելու անցնում էին մէկ այս մէկ այն բանի մասին խօսելու և ի միջի այլոց խօսեցին Տրփիսի մասին, նրա կօնցէրտների և թատրոնի մասին, նոր զգեստների, նորագոյն ձևերի մասին, վերջերում տեղի ունեցած հարսանիքների և նորագոյն բոմանների մասին:

Սա մի տաք խօսակցութիւն էր, մի բազմագունի իրարանցում, որ Նինօն շատ էր սիրում, բայց չնայելով դորան այդ բոլորից նա առանձին բաւականութիւն չստացաւ. բացի Շիկվարիձէ այրիից մնացած բոլոր կանայք տարիքով հասակաւոր էին և նրանցից ոչ ոք չուներ այնքան երիտասարդական աշխոյժ, որ լցնէր սրա ամբողջ գոյութիւնը:

Ճաշի վերայ էլ այնքան ուրախ չէր. թէպէտ տղամարդիկ կատակներ էին անում, ծիծաղում էին, բայց նրանց լու աղա-

մադրութիւնը այն աստիճանի հաճելի չէին Նինօյի համար. նա ինքն էլ չկարողացաւ իրան այնպիսի լաւ արամադրութեան մէջ դնել, որ իրան լաւ զգար և ժամերը այլևս չհամարէր: Զընայելով այս բոլորին, նա ամեն կերպ աշխատում էր բոլորի հետ լաւ լինել, որովհետև դիտէր որ բոլորը իւր համար են եկած և իւր վերագարձն են աօնում. նա խօսում և ծիծաղում էր նրանց հետ և երբ ծերունի Գօնէլին իւր բաժակը նրա կենացը դատարկեց և միւս հանդիսականներին ևս հրաւիրեց նոյնը անել, Նինօն ըստ երևոյթին խիստ զգացուած էր և իւր շնորհակալութիւնը յայտնեց տիկիններին նրանց հետ համըրուելով, իսկ պարոններին մի այնպիսի վայելուչ շարժումով, որ բոլորն էլ մնացին հիացած:

— «Հրաշալի աղջիկ է», ցածր ձայնով Գօնէլին ասում էր ծերունի իշխանին, որը իւր աչքերը ամենեւին չէր հեռացնում Նինօյից և ուշադրութեամբ հետևում էր նրա խօսակցութեանը:» «Սպասիր, ես կ'ամենում եմ իմանալ, արդեօք մէկը սողսակէ՞ն նրա սրտի մէջ թէ ո՛չ»: Նա լցրեց իւր բաժակը և յետևից մօտենալով՝ նրա աթոռին, մի ինչ որ բան չընշաց նրա ականջին:

— Հա՛ հա՛ հա՛, ծիծաղեց Նինօն բարձրաձայն: «Ո՛չ, ո՛չ դուք միտաւում էք: Նա դեռևս անսահման կառաւարիչ եմ իմ սրտին և մինչ այսօր ո՛չոքի չէ յաջողուել իմ այդ իշխանութիւնը վիճելի անել: Հա՛ հա՛ հա՛...» նա այնպէս ազատ և անվիշտ ծիծաղեց, որ ինչպէս պապը, նոյնպէս և Գօնէլին հաւատացին նրա խօսքերի ճշմարտութեանը և ուրախ միմիանց գլխով արին:

«Յթէ բանն այդ դրութեան է, այն ժամանակ շատ դժուար չէ լինելու Նինօյին հակեցնել լեվան Չիգանու կողմը» մտածեց ծերունի Վարիպանիձէն և անխօս դատարկեց բաժակը, մտքով յաջողութիւն և կատարումն մաղթելով իրան այդքան ցանկալի ամուսնութեան:

Ճաշից յետոյ նա իւր-մտքերը յայտնեց որդուն և քեռզուստը Ճալաչիլուն. երկուսն էլ շտապեցին գովել նրա մտածածը և խօստացան օգնել նրան նախագիծը իրագործելու:

«Նինօյին ուղարկիր ինձ մօտ Մուխիսէվի» խնդրեց նորանից տիկին Ճալաչիլին... «Իմ տանս մէջ նա կը ծանօթանայ լեվանի հետ և ես չեմ կասկածում որ ինչպէս նա սրան, սա էլ նրան դիւր կըրան»:

Դրանից յետոյ երբ չորը անց էր կացել, հիւրերը սկսեցին մէկը միւսի յետևից հեռանալ և տան մէջ կրկին տիւրեց հանդարտութիւնը: Ծերունի Վարիպանիձէն լցրեց իւր ծխաքաղը և զընաց նստեց իւր սիրած ընկուզենու տակը: Նրա որդի Վախտանգը ապակէ սրահում թեք ընկաւ մի թաղթի վերայ և կիսա-

քուն աչքերը ուղղեց դէպի դիմացի հեռաւոր լեռները, իսկ պառաւ մօմին իւր սենեակումն էր և ինչ որ մի պատառուտած գիրք էր կարդում:

Նինոն մի քիչ նստեց հօր մօտ, բայց որովհետև սա լռում էր և նիրհելու մօտ էր, ինքն էլ դուրս գնաց պարտէզը և այնտեղից ելաւ պարտէզի յետքում գտնուած բարձրութեան վերայ, որտեղից կարող էր դիտել ամբողջ հեռաւոր հովիտը: Իւր մանկական տարիքում նա շատ անգամ այստեղ եղած էր և երբ նա կըրկին տեսաւ իրան լաւ ծանօթ այդ գեղեցիկ պատկերը, նրա մէջ շատ հաճելի յիշատակներ զարթեցան. բայց նոքա նրան երկար չէին զբաղեցնում, նրանք չէին դիպչում Նինոյի սրտին, որովհետև արա բոլոր մտածմունքները կախուած էին ներկայից: Սև որովհետև ալ ներկան այս բոլորիս դատարկ և առանց հաճոյքի էր, այդ պատճառով էլ նրա տրամադրութիւնը վատացաւ: Նա այժմ հասկացաւ, որ իւր հայրենի տանը ներկայիս ոչ մի զուարճութիւն գտնելու չէ, որ նրան այստեղ մենակութիւն ու տաղտկութիւն է սպասում, այնինչ նա ստիպուած է այստեղ մնալ և, հակառակ իր բնաւորութեան, միշտ բաւականութեան տրամադրութիւն ցոյց տալ:

«Մօտերբիս ինձ այցելիր» թէպէտ ասաց հօրաքոյր ձալաչվիին գնալիս, բայց այս այցելութիւնը Նինոյին առանձնապէս չէր հրապուրում: Այդ հօրաքոյրը այլևս երիտասարդ չէր, ապօրած կին էր, որի ընկերութեան մէջ նա դժուար թէ իրան համապատասխանող որևէ հաճոյք գտնել կարողանար: Ոչ, նա ուրախութեամբ իւր ընկերուհիների մօտ կը գնար: Նրանց մօտ կարող էր թէ զուարճութեան և թէ վրձանքի վերայ հաշուել, բայց նրանք բոլորն էլ դժբաղտարար այնքան հեռու էին ասլըում, որ իւր ցանկութիւնը հեշտութեամբ կատարուելու բան չէր: Սրկար մտածեց նա մի որևէ փոքրիկ ճանապարհորդութեան վերայ և երբ արեւը լեռների յետևը ծածկուեցաւ, նա հանդարտ լռիկ պարտէզից վերադարձաւ ասելի խաղաղիկ տունը:

Գլուխ երրորդ

Կամացուկ և առանց աղմուկի անցան գնացին յունիս ամառայ գեղեցիկ և երկար օրերը, որոնց մինը նման էր միւսին, արովհետև առանց եղանակի փոփոխութեան անամպ երկնքի վերայ փայլում էր արեւը, երկարաձիգ հովիտը տարածուած էր ներքևում և կարծես նիրհում էր զուարթ և պայծառ լոյսից զրկուած,

իսկ կանաչադգեհատ լեռները ցցուած էին պայծառ և մաքուր մութ
 կապուտակ երկնքի մէջ։ Ամեն առաւօտ ծերունի Վարիպանիձէն
 գնում էր ներքեւ խաղողի այգին և դիտում էր չհասած խաղողը,
 յետոյ նա նստում էր քարի վերայ առուակի ափին և լսում մօ-
 տակայ ջրաղացի տնուի դրդոցը։ Շատ անգամ էլ գնում էր նա
 դաշտ ու խօտհարք, մանաւանդ երբ այնտեղ քաղհան էին անում
 կամ խոտ քաղում։ Այս դէպքում նա կարող էր ամբողջ ժամերով
 նայել, թէ ինչպէս գութանը ճեղքում է պարարտ հողը և կոշտը
 մի կողմ ձգում կամ ինչպէս գեղեցիկ և պարարտ խոտը ընկնում
 է մանգաղի տակ։ Այդպիսի ժամանակ նա մեծ բաւականութիւն
 էր գտնում։ Սակայն այդպիսի ժամանակն աւելանում էր բերքի քանակու-
 թեան և դրամի մասին չէր մտածում, որ նոցանից կարելի էր
 ստանալ, այլ ինքը աշխատանքը նրան ուրախութիւն էր պատ-
 ճառում, որովհետեւ այդ աշխատանքը զործ էր գրւում իւր
 սեփական կալուածքի վերայ, որ իրան այնքան թանկ արժէր
 և որի տէր լինելուն նա աւելի արժէք էր տալիս քան ուրիշ
 պատիւների ու պաշտօնների։ Այդ կալուածքը երբեմն կերակրել
 է իւր նախնիներին, այժմ էլ կերակրում է իրան և իւր որդուն
 և ստիպուած է կերակրել նաև Նինոյի երեխաներին։ Ապագայի
 մասին հոգսերը մի քանի օրից ի վեր նրան աւելի չատ էին
 դրադեցնում քան առաջ և շատ անգամ երբ նա անցնում էր
 դաշտի, արօտների և այգու միջով՝ նրան համակում էր մի ար-
 տասնվոր զգացմունք։ Նրա սիրտը բաբախում էր ուրախութիւ-
 նից, որովհետեւ կարող էր յուսալ, որ իր հայրենական կալուած-
 քը լաւ ձեռքերի մէջ կը մնայ։ Օրուայ ընթացքում մի տասն
 անգամ նա մտածում էր Զիգանու մասին և իւր որդուն պատմում
 էր մի որևէ լաւ գծի մասին Լեվանի կեանքից, գովում էր նրա
 բարոյականութիւնը և աշխատասիրութիւնը և նրան համոզում
 էր, որ ամբողջ շրջակայքում Նինոյի համար Լեվանից յարմար
 մարդ անկարող էր նա գտնել։ Վախտանգը նրան լսում էր ան-
 տարբեր կերպով։ Մինչև անգամ այն դէպքում, երբ նշմարում
 էր, որ հայրը իւր գովաբանութեան մէջ շատ առաջ է գնում,
 այնուամենայնիւ նրան հչ մի ընդիմախօսութիւն չէր տնում,
 որովհետեւ նրա համար իսկապէս համարեան միևնոյնն էր, ար-
 դեօք նրա աղջկան Լեվան Զիգանին է առնելու թէ մի ուրիշը
 իսկ այդ աղջիկը։ Համարեան նուազում էր սրտնեղութիւնից և
 դեռ ևս հայրը նորան հչինչ չէր տասել, երբ ինքը ցանկութիւն
 յայտնեց այցելել ձաւալիլի հօրաքրօջը։ ԶԷ որ ինքը պարտաւոր
 էր նրան մի այցելութիւն անել և հետևապէս կամենում էր այդ
 բանը օր առաջ վերջացնել։ Նինոյին ուղեկցեց հայրը և, ինչպէս

խօսուած էր, հօրաքոյրը իւր կողմից հրաւիրեց Լեւան Զիգանուն
և այլ երկու դրացի երիտասարդներ: Այս վերջինները Նինայի
վերայ ոչ մի տպաւորութիւն էլ չարին, նրանց չ'աջողուեց Նի-
նային որևէ կերպով զբաղեցնել, այն ինչ Զիգանին, չը նայելով
իւր հանդարտ բնաւորութեանը, աւելի դիւր եկաւ Նինային: Նա
թեպէտ գեղեցիկ չէր, բայց նրա բարեսիրտ երեսը խիստ հաճելի
արտայայտութիւն ունէր և նրա հեզաբարոյ անձնաւորութիւնը
դէպ ինքը ձգող և վստահութիւն զարթեցնող էր: Նրա վար-
մունքը բնական էր, պարզ էր և ցոյց էր տալիս նրան ինչպէս
որ կար և իրան առանց նեղութիւն տալու ցանկացողի հետ
բարեկամանում էր: Նինօն էլ իւր կողմից չէր կարող ուրիշ կերպ
անել, այլ պարտաւոր էր նրա հետ լաւ վարուել և երբ նա երեք
օրից յետոյ թողնում էր հօրաքրօջ տունը և Լեւանին հրաժեշտ
էր տալիս, նրա ձեռքը տաք տաք թափ տուեց իբրև մի վաղա-
ժանօթ բնի:

— Այցելեցէք մեզ մի անգամ ևս, խնդրեց Նինայի հայրը և
Լեւանը խօստացաւ կատարել ամենամիտ պատրաստականու-
թեամբ:

Նինօն այնքան դիւր էր եկել Լեւանին, որ սա առանց այդ
հրաւերին էլ կգար: Իւ ճշմարիտ մի շաբաթից յետոյ նա եկաւ և
ոչ թէ միայն ծերունի Վարդապետիձէն, այլ և նրա որդին և նոյն
ինքն Նինօն նրան դիմաւորեցին, որովհետև Նինօն ուրախացաւ,
որ տան մէջ կեանքը փոքր ինչ եւ եկաւ և իրան զրօսանք պատ-
ճառեց: Նա չէր ծածկում, որ Լեւանին ուրախութեամբ տեսնում էր
իրանց տան մէջ և պապից պակաս չէր աշխատում, որ իրանց մօտ
մնալը նրան հաճելի թուար:

«Փառք Աստուծոյ, ինչպէս երևում է, աղջիկը հակուած է
նրան» մտածում էր ծերունի Վարդապետիձէն, երբ նրանց միասին
խօսելով կամ ծիծաղելով էր տեսնում:

Նա այժմ շատ ուրախ էր, որ այդպիսի մի միտք է յղացել և
ինքն իրան ասում էր մի որոշեալ աստիճանի բաւականութեամբ,
որ նա միշտ ուղիղն էր ըմբռնում և շնայելով իւր ծերութեանը,
սկսպէս իր տան խնկական պահապանն էր ու դեկավարը:

«Ո՛չ վախժանգը և ոչ էլ մամը կարող էին այդ մտքին
գալ և Զիգանուն ու Նինային միմիանց մօտեցնել» փափում էր
շատ անգամ ինքն իրան: «Ո՛չ, նրանք այդ մասին երբէք էլ չէին
մտածել և ես էլ չգտեմ, թէ արդեօք նրանք Նինայի համար
մեծ պէտք է գտնէին, որովհետև չկայ և ոչ ուրիշ մէկը, որ Զիգա-
նուն հաւասար լինէր:

Իսկ երբ Զիգանուն գնալուց յետոյ նա իւր նախագիծը յայ-

տնեց Նինոյի մամին,, սա թեպէտ ոչ մի հակառակ բան չասաց, միայն կարծում էր, որ շտապել հարկաւոր չէ և համբերութեամբ սպասելու է. թերևս մի աւելի արժանաւորը կը գտնուի: Իսկ Վարիպանիձէն չէր էլ մտածում մամի խորհրդին հետեւել, նա չէր կամենում ուրիշ մէկին: Բայց այնուամենայնիւ օգտակար համարեց այդ մասին մի անգամ ևս իւր բարեկամ ծերունի Գօնէլին հետ խօսել: Այդ նպատակով նա զնաց Ներքև դէպի Գինատի գիւղը:

«Լաւ է, որ արիւնն աչքդ առած առաջ չես գնում» ասաց Գօնէլին, հարկաւոր է տասն անգամ չափել և մէկ անգամ կտրել»

— «Այդ է և իմ կարծիքը» ասաց նրա կինը: Եթէ նրանք միմեանց սիրեն, այդ շատ շուտ ցոյց կտան: Տոյ Աստուած, որ այդպէս լինի, որովհետև այդ երկուսից ճշմարտիւ մի գեղեցիկ զոյգ կը կազմուի: Նա Նինոյի համար աւելի լաւ ամուսին չիմ գտնում և եթէ ձեզ շտապելուց զգուշացնում եմ, այդ նրա համար եմ անում, որովհետև ես մարդկանց չար լիզուկներից վախենում եմ: Նրանք կարող են ասել, որ Զիգանու վրայ ճշում գործ դրին և նրան ամենևին ժամանակ չըտուին մտածելու»

— «Բոլորովին սեղիդ է, մարդիկ կարող են այդ ասել», ասաց ծերունի Վարիպանիձէն և միտքը դրեց զգոյշ մնալ և իւր դիտաւորութիւնները մի առ ժամանակ զազտնի պահել:

Մի քանի օրից յետ Զիգանին կրկնեց իւր այցելութիւնը և Նինօն դիմաւորեց նրան անփոփոխելի բարեհաճութեամբ: Նրբաշա բանը տեսաւ իշխան պապը, չափազանց ուրախացաւ և մօտ էր իւր զգացմունքներին արտայայտութիւն տալու և ինչ որ սըրտումը ունէր բոլորն էլ ասել: Բայց իրան զսպեց, որովհետև ինքն իրան ապահով էր համարում այդ կողմից և նախատեսնում էր, որ Զիգանին երկար սպասեցնել չի տալ և կանէ իւր առաջարկութիւնը: Նրա բոլոր վարմունքից երևում էր, որ Նինօն նրա մէջ զարթացրել էր մի խորին համակրութիւն և չեղանք ինքն իրան նրա մօտին բաղդաւոր էր զգում:

Ծերունի իշխանը կարող էր իսկապէս գոհ լինել: Ամեն բան նրա ցանկութեան համաձայն էր կատարուում և ճիշտ այնպէս, ինչպէս որ ինքը նախատեսած էր: Այնուամենայնիւ նա հանգիստ չունէր և ստուգութեան պահանջը նրան մի ակնթարթ էլ բաց չէր թողնում: Մի կիւրակէ առաւօտ, երբ Նինօն ապակէ սրահում, նստած էր համարեա երազելով և հեռաւոր լեռներին էր մտիկ տալիս, ծերունին մօտեցաւ նրան և նրա մօզերը շոյելով՝ հարցրեց թէ ինչ բանի մասին էր մտածում:

— Սիրարդ նեղանում է նրա համար՝ ասաց իշխանը.

— «Ո՛ւմ համար» հարցրեց Նինոն բոլորովին միամիտ:

— Ո՛ւմ, Լեվանի համար:

— Հա՛ հա՛ հա՛-ծիծաղեց Նինոն բարձրաձայն, որովհետև Լեվանի անունը իրան շատ անսպասելի էր. որովհետև այս միջոցիս ճշմարտիւ որ Լեվանի մասին չէր մտածում ինքը:

— «Միամիտ մի ձեռնալ», մատուլ սպառնացաւ իշխանը, «ես գիտեմ, որ դու նրան հաճութեամբ ես տեսնում և չես նեղանալ, եթէ նա քո ձեռքը խնդրէ, ես էլ յատուկ ուրախ կը լինեմ այդ բանին»:

Նինոն փոքր ինչ նեղացած նախեց պապին, բայց միևնոյն ակնթարթում ինքն իրան հաւաքեց և կամաց հարցրեց՝

— «Դու ուրախ կը լինես...»

— «Անշուշտ, որովհետև նրանից աւելի լաւ մարդու դժուար թէ Կուկարդանաս գտնել: Նա բարի է, արդարադատ, աշխատասէր և ունի երկու բան, որ կեանքի մէջ շատ մեծ նշանակութիւն ունեն և որքան շատ գնահատես նրանց դեռես քիչ է. նա ունի ուսում և նիւթական կարողութիւն: Գիտնական չէ նա և դա հարկաւոր էլ չէ. բայց ես կարծում եմ, որ ինչ կարևոր գիտնական տեղեկութեանց է վերաբերում մեր մէջ եղած սակաւ երիտասարդներից շատ յետ չէ. մէկնումէկը կարող է նորանից աւելի զարգացած լինել, բայց թէ նա սրտով աւելի աշխատասէր լինի քան Լեվանը՝ ես կաւակածում եմ. իսկ նորա կալուածքը. ամբողջ Իմէրէթիայում նրա այգիներից լաւը ես չեմ ճանաչում: Շատ հարուստ չէ ինքը, որովհետև այդպիսի հարուստներ մեր մէջը չկան, բայց նա ունի առատ հաց. իսկ ով հաց ունի, նա կարողութեան տէր է համարւում: Այժմ ի՞նչ ես կարծում, յարմար անձը չէր կարող լինել քեզ համար:

— «Այո՛, բայց նա ամենեին իմ ձեռքը չէ փնտրել» պատասխանեց Նինոն: «Նախ և առաջ ես պէտք է իմանամ, արդեօք նա ինձ սիրում է և յետոյ ես բոլորը կը կշռադատեմ»:

— «Լաւ լաւ» ասաց ծերունին. «ես քեզ հետ բոլորովին համաձայն եմ, միայն թէ դու ինձ ասա, արդեօք դու նրան ուզում ես, արդեօք քեզ հաճելի է»:

— Աւելի քան մի ուրիշը:

— Ե՛հ, ուրեմն եթէ նա քեզ դիւր գայ, դու էլ նրա սէրը աւելի կ'ունենաս: Ես անգամ կարծում եմ, որ նա քո սրտում արդէն տեղ է բռնել և այդ բանը ինձ անսահման ուրախացնում է, որովհետև նա քո սիրոյդ արժանի է, մի խօսքով նա քեզ արժանի է»:

Այս խօսքերից յետոյ նա արաւ Լեւանի ամբողջ կենսա-
գրութիւնը և խօսեց նոյնպէս նրա հօր մասին: Նինոն՝ Զուլադրու-
թեամբ լսում էր, որովհետեւ ինքն էլ մտածել էր Լեւանի կինը
լինելու կարելիութեան վերայ և որովհետեւ այժմ իշխան պապը
այդ մասին խօսեց, ինքն էլ սկսեց լուրջ կերպով այս հարցով
զբաղուել և մինչև անգամ հարցը հաճելի գտնել: Դեռ ևս առա-
ջի շարքից սկսած Նինոն ձգտում էր ռուս գնալ, որովհետեւ
տանը տաղտկալի էր և այն աստիճանի տաղտկալի, որ երբեմն
նա չը գիտէր թէ ինչ անէր: Որպէս զի կարողանայ դուրս գալ
և կեանքը իւր ճաշակի յարմար ուղղել, նա պէտք է ամուսնա-
նար և որովհետեւ Զիգանու բնակութիւնը արդէն ուսումնա-
սիրած էր կարծում, նորա բարեարտութեան և մեղմ բնակութե-
ան վերայ այլևս կասկած չունէր, ինքը պատրաստ էր իւր
ձեռքը նրան տալու: Այս մտածմունքների ժամանակ նա իր հո-
գու խաղաղութիւնը միշտ պահպանել էր, հետևաբար ամենա-
կարևոր եզրակացութիւն անելը, որին նա պատրաստուում էր,
նրան, ոչ դժուարութիւն և ոչ էլ ընդհարումներ պատճառեց:
Նրա սիրտը այդ միջոցին լռած էր և միակ զգացմունքը որ նրան
շարժում էր, դա այն տենչանքն էր, որ նա ունէր դէպի ազա-
տութիւնը և անկախութիւնը:

Զիգանու կարողութիւնը նորան ձգում էր նրա անձնա-
ւորութիւնից ոչ աւելի, որովհետեւ դրամի պակասութիւնը դեռ
ևս երբեք նրան հոգս չէր պատճառել: Նրա ամեն մի ցանկու-
թիւնը միշտ կատարուած է եղել, այնպէս որ նա իւր ստա-
ցուածքը անսպառելի էր համարում և այդ մասին շատ քիչ էր
մտածում մի հարուստ ամուսնութեամբ իւր դրութիւնը աւելի
լաւացնել: Ոչ, նա ոչ մի բան հաշուի տուկ չէր գնում, այլ մի-
այն նա զգում էր մի անբաժանելի ձգտում դէպի ապատրութիւն,
զուարճութիւն և զուարթ տրամադրութիւն և այն կարծիքին էր,
որ Զիգանու նման մարդու հետ ամուսնանալով, այդ ամուս-
նութեան մէջ կարող է գտնել ամեն բան:

Եւ երբ երեք օրից յետոյ Լեւանը նրանց մօտ եկաւ, Նի-
նոն բոլորովին հանդիստ էր իւր վճռի վերաբերութեամբ և պատ-
րաստ էր իւր այժմ-ն. ասել, եթէ նա այդ պահանջէ: Բայց նա
այսօր այդ առաջարկութիւնը չարաւ, հետևապէս Նինոն ստի-
պուած էր մի ամբողջ շարքով ևս սպասել: Այս սպասողութիւնը
վատ ազդեց Նինոյի վերայ, որովհետեւ այն օրից սկսեց ապագայի
մասին երազել, որով ներկան աւելի դատարկ և ուրախութիւնից
զուրկ երևաց: Մինչև անգամ անցեալի յիշողութիւնները այն
ուրախ օրերի մասին, որ անց էր կացրել Տփլիսում իւր մօրա-

քրոջ մօտ, նրան այժմ չէին զբաղեցնում և կամաց կամաց կոր-
ցնում էին իրանց ամեն մի արժէքը նրա համար:

Վերջապէս մի պայծառ տաք ճաշից յետոյ Լեվանը ամօթ-
խածութեամբ մօտեցաւ Նինոյին, կարմրելով բռնեց նրա ձեռքը
և մի քանի խօսք տաաց, որ Նինոյից զատ ոչ ոք չէր կարող
հասկանալ. այնքան միջին և անկապ էին նրանք: Լեվանի դժուար
կացութիւնը համարեալ ծիծաղելի տպաւորութիւն էին անուամբ
Նինոյի վերայ, բայց սա իհարկէ թոյլ չը տուեց, որ Լեվանը այդ
բանը նշմարէ և սիրոյ արտայայտութեանը պատասխանեց նրա
ձեռքը ամուր սեղմելով, որը Լեվանի վստահութիւնը կրկին
վերադարձրեց:

— Հաւատացէ՛ք ինձ, որ ես ձեզ սիրում եմ անկեղծ սիրով
և ինձ համար բաղդաւորութիւն եմ համարում Ձեզ իմ անուա-
նելու կարող լինել, իմ կեանքի ամենամեծ բաղդաւորութիւնը,
աւելացրեց Լեվանը:

Նրա խօսքերին ընկերակցում էր մի աղաչաւոր և քնքոյշ
նայուածք, որ ազդեց Նինոյի սրտի վերայ և նրա սիրտը լցրեց
ջերմութեամբ:

— «Նո ևս բաղդաւորութիւն եմ համարում Ձերը լինելու»
պատասխանեց նա Լեվանի ձեռքը սեղմելով: Մեր միացումը
արդէն մի քանի շաբաթ է, որ դարձրել էր իմ գաղտնի ցանկու-
թիւնը, նոյնը և իմ իշխան պապինը:

Լեվանը բերկրալի յուզմամբ համրուրեց Նինոյի ձեռքը և
կամենում էր նոյնը կրկնել, երբ իշխան պապը կանգնեց նրանց
առաջին:

— «Փնփռ Աստուծոյ, որ դուք միմեանց դատե՛ք ասաց նա
ուրախութիւնից դողդողացող ձայնով: «Ձեր փոխադարձ սէրը
ինձ ամենաբըջանիկ մարդն է դարձնում, որովհետեւ մի աւելի
մեծ բաղդաւորութիւն քան երկուսիդ միացած տեսնել իմ կեան-
քում ես երբէք չեմ ցանկացել»:

Ապա ձեռները դրեց նրանց գլխի վերայ և մի կարճառօտ
աղօթք ասաց, որի ժամանակ Նինօն իւր երեսը նրա կրծքի
մէջ թաղեց և նրան իւր ձեռքերով պինդ գրկեց: Իշխանը ինքն
իրան երիտասարդացած էր համարում, այնքան լաւ էր նրա տրտ-
մադրութիւնը, այնպէս համակել էր նրան ուրախութիւնը, որով-
հետեւ նրա ամենախորին բաղձանքի լրացումն էր կատարուել:
Աւելի պակաս երջանիկ երևում էր նրա որդի Վախթանգը, թե-
պէտ իշխան պապից լաւ խօսեց և իւր խօսքերը ուրախ և զու-
արթ ծիծաղով զօրեղացնել էր ձգտում: Նա միայն ուրախ էր,
որ այժմ այլևս Նինոյի մասին հոգալու հարկաւորութիւն չուներ,

նրա հոգսը, որ հակառակ իւր սակաւ զրդուող տրամադրութեան երբեմնակի անհանգստացնում էր նրան, արդէն միջից վերացուած էր:

Այնինչ ինքը Լեւոնի և Նինոյի հետ խօսում էր, իշխան պապը զնաց և Սօփիոյի ու Գարեկոյի օգնութեամբ մեծ մօրը բերեց ապակէ սրահը: Մեծ մայրը լաց եղաւ, երբ Նինօն փաթաթուեց նրա պարանոցով և նրա հետ լաց եղան նոյնպէս երկու նաժիշտները:

— «Այո, ես այդ գիտէի, որ մէկ օր փախչելու ես ինձանից», ասաց նա Նինոյի այտերը համբուրելով: «Փնոք Աստուծոյ, որ դու հեռու չես գնալ և ոչ էլ օտար մարդկանց մէջ կը մտնես: Ա՛խ, դու իմ միակ զոհարս. դու կամենում ես Լեւոնի ամուսինը դառնալ, թող Աստուած օրհնէ քեզ, քեզ ամեն բարիք տայ և մեղր կաթեցնէ քո ճակատագրի բաժակի մէջ: Ա՛խ դու, իմ մայրսեան վարդ, դու կամենում ես հեռանալ մեծ մօրիցդ: Ի՞նչ է, դուր չէ՞ դալիս քեզ մեզ մօտ: Ոչ, ոչ, զնա նրա մօտ, դարձիր նրա բարի և հաւատարիմ ամուսինը: Տէր Աստուածը այդպէս է մեզ համար մեր ճակատագրական դրբի մէջ գրած: Այո, զնա և դարձիր նորա տան զարդն ու բարի հրեշտակը: Սէ դու, Լեւոն, սիրիւ սրան, պատուիր և յարգիր սրան, որովհետեւ նա մեր սիրելի թանկագին գաւակն է, գաւակ իմ հանգուցեալ Վաքոյի: Միաժամանակ եղիր նրան և եղբայր և ընկեր և տունդ նրա համար դրախտ դարձրու»:

Կեռ մամը չէր աւարտել իւր խօսքերը, երբ սպասաւորները ամբողջ խումբը այստեղ էր հաւաքուել: Թասօ, Սօսիօ, Վանօ և Բաթէն սպասաւորները, խոհարար Նիկօն, այգեպան Յասոնը, տակառապետ Գէորգին բոլորն եկած էին ապակէծածկ սենեակը և ճաղերի մօտ լռիկ կանգնած էին և նայում էին մէկ Նինոյի մէկ էլ Լեւոնի վերայ: Յետոյ երբ տիկինը նստեց, նրանք մօտեցան և նոր նշանաւորածներին յայանեցին իրանց շնորհաւորութիւնները: Նոցանից իւրաքանչիւրը մի քանիսը ջերմ խօսքեր էր ասում, որից յետոյ նա յետ էր քաշոււմ, գլուխ էր տալիս և դուրս գնում:

— «Գէորգի, գինի բեր այստեղ», հրամայեց Նինոյի հայրը, որ կարծես ընդ նոր սթամբուլումի նման էր:

Այսօրուայ դէպքը սկիզբն էր մի շարժուն ժամանակի, հանդէսների մի ամբողջ շաւքի և նոցա մասին մտածմունքները նրան իւր թմրած դրութիւնից արթնացրել էին: Նա դատարկեց մի քանի բաժակ միմեանց յետևից իւր դասեր և փեսայի կենացը և երբ քահանան իւր կնոջ հետ, Շիկվարիձէի այրին և

Գօնակէ դրացին եկաւ. նա խմեց նրանց հետ ևս և պահանջում էր, որ իրանից յետ չը մնան, որովհետև այսօրուայ օրը նրա և նրա գերդաստան համար ուրախութեան մի օրէր և ով որ նրա բարեկամն էր պարտաւոր էր նրան ուրախակից լինել:

Այժմ ճշմարիտ որ նա ուրախ էր, որ նշանադրութիւնը գլուխ եկաւ, նա այդ բանի վերայ նայում էր իբրև մի բաղդաւորութեան վերայ և մտածում էր արդէն պսակի պատրաստութիւնների մասին, երբ դեռ ևս ուրիշներին ոչ ոք այդ մասին մի խօսք անգամ չէր ասած:

Գլուխ չորրորդ:

Այնուհետև տունը ամեն օր վխտում էր հիւրերով, որովհետև բոլոր դրացիք, ազգականները և բարեկամները գալիս էին մէկը միւսի քամակից Նինոյին իրանց շնորհաւորութիւնները յայտնելու: Առաւօտից մինչ երեկոյ հոսում էր գինին, բաժակները հնչում էին և ուրախ խօսակցութիւնները արձագանք էին տալիս սովորաբար հանգիստ այգու մէջ: Հարսանիքը պէտքէ տեղի ունենար, օգոստոսի երրորդ կիրակէին, նշանադրութիւնից չորս շաբաթ յետոյ, բայց որովհետև տունը երբէք չը դատարկուեց ե ամեն օր նոր հիւրեր էին երևում, այդ պատճառով էլ երկար ժամանակ անկարելի եղաւ սկզբնական նախապատրաստութիւնները տեսնել: Սև երբ միայն երկու շաբաթ էր մնացել, հանգստութիւնը նոր վերադարձաւ տան մէջ և այժմ եկաւ ձալաչվիլի հօրապայրը նախապատրաստութիւնները ղեկավարելու և կարևոր կարգադրութիւններ անելու: Նինոն պահանջում էր, որ իւր պսակի ղգեստը Տփլիսում իւր գերձակուհին կարէ, մինչդեռ ըստ հին աւանդութեան այն ղգեստը դրացի աղջկերը պէտքէ կարեն և որովհետև մեծ մայրը չէր կտմենում հակառակ սովորութեան գործել, հետևապէս Նինոն ստիպուած էր զիջանել: Նա բարկացած էր, որ իւր ցանկութիւնը չկատարուեց, որովհետև նա կամենում էր որ իւր պսակի օրը բոլոր կանայք և օրիորդները հետաքրքրուին մէ միայն նրա ղգեստների գեղցկութեամբ, այլև նրանց նրբութեամբ և եթէ նա վերջ 'ի վերջոյ զիջու, այնուամենայնիւ առիթը բաց չթողեց իւր դժգոհութիւնը այդ մասին արտայայտելու:

— Դու քեզ այդ երեխայական բաների համար մի նեղացնիլ՝ ասաց մեծ մայրը տիկին ձալաչվիլուն, երբ սա գանգատուեց: Թէ շատ բաներում Նինոն կամակորութիւն է անում և նրա կարգադրութիւններին չէ հպատակում:

Տիկին ձալալվիլին այնու ամենայնիւ շատ հեռու էր Նինօյի վարմուքները երեխայութիւններ համարելու, որովհետեւ ինքը տեսաւ, որ սա շատ վաղ իւր երեխայութիւնը մի կողմէն է թողել և այնպիսի հակումներ է ցոյց տալիս, որոնք յատուկ են հասուն կանանց և խնամուած են նրանից: Իսկ ամենցից անախօրժ նրան երևաց Նինօյի անտարբերութիւնը և սառնութիւնը, որով նա խօսում էր Լեվանի և սպասելիք պատկազրութեան մասին: Նա ամենին զգացմանց որևէ յուզմունք չէր ցոյց տալիս, երբ Լեվանը՝ գալիս էր և մի ծաղկեփունջ՝ ձեռին սանդուխներով դէպի վեր էր ածապարուած: Սրա այցելութիւնները Նինօյին այլ ևս զբօսանք չէին պատճառում, որը իրան ցոյց էր տալիս իբրեւ շատ զբաղուած և նրան ընկերութիւն տւելի սակաւ էր անուա՞րան առաջ: Որովհետեւ Լեվանին յայտնի էր, որ Նինօն հարսանիքի պատրաստութիւններին շերտ մասնակցում էր, այդ պատճառով էլ նա Նինօյի վարմանց մէջ առանձին ոչինչ չէր նշմարում, ևս առաւել, որ նա առաջուայ պէս ուրախ դիմաւորում էր և երբ կարևոր էր համարում քննութեամբ վաւերում էր հետը և սա զգացած բերկրանքից դղրում էր: Այո՛, նա ոչ մի ակնթարթ չէր կասկածում իւր բաղդաւորութեան վերայ և ուրախութեամբ ու ներքին տենչանքով սպասում էր այն ակուր, երբ նա ընդ միշտ կը միանայ Նինօյի հետ:

Վերջապէս հասաւ վերջին շաբաթը և Վարիպանիձէի տան մէջ սկսեց մի այնպիսի կեանք և շարժում, որոնց նմանը նրա տան պատերը շատ տարիներ է, որ չէին տեսել: Բոլոր ոչ հարուստ դրացիները ներկայացան և յայտնեցին իրանց պատրաստականութիւնը նախապատրաստութեանցը մասնակցելի և օգնելի: Ֆեղակա՞ն սովորութեան համաձայն նրանք այդ ծառայութեան համար ոչինչ վարձատրութիւն չեն պահանջում. նրանք ցանկանում են միայն մի քանի օր կուշտ ուտել: Բայց Վարիպանիձէն տալիս էր ոչ միայն ինչ որ կարող էին նրանք ուտել, այլև տալիս էր նրանց միս, հաց և գինի կանանց ու երեխաների համար և ամենեւին չէր նեղանում, երբ նրանք այդ բոլորի փոխարէն հազիւ ձեռք էին շարժում և առաւօտից մինչ երեկոյ պարապ չլրում էին: Ինքը բաւականաչափ սպասաւոր ունէր, որոնք աշխատում էին և գիտէր, որ նոքա որոշեալ ժամին ամեն բան պատրաստ կու՞նենան: Առանց ձայնի և աղմուկի մեծ տան բոլոր մասերը մաքրուեցին և զարդարուեցին և պարտիզում երկու երկար և լայն տերևածածկ սրահակներ շինուեցին, որոնց մէջ հարսանեաց ընթրիքն էր լինելու: Վարիպանիձէն երկու հարիւր հոգուց աւելի էր հրաւիրել, հարիւրից աւելի կը լինէին փեսայի հետ եկող-

ները. իսկ այդքան հոգու համար տան մէջը տեղ չկար: Հարստ-
ներէից եւեք օր առաջ Տփլիսից եկան Վեգիբիձէ մօրաբոյրը և
նրա հետ Նինօյի մի ընկերուհին, գեղեցիկ Բուսուդան Լօմիձէն:
Արդէն երեկոյեան նուագարանները հնչեցին պայծառ լուսաւո-
րուած ապակէ սրահի մէջ և նրա հեռուն լսելի ձայները հնչեցին
ձորի մէջ և այդպիսով իմաց էին տալիս դրացիներին, որ Վարի-
պանիձէի հանդէսը սկսուել է: Մինչ դեռ դահլիճում բաժակները
լըար էին դիպչում և այնտեղ ծիծաղ էր լսոււմ, գաւիթում, մա-
ռանում, ամբարում և խոհանոցում շարունակոււմ էին պատրաս-
տութիւնները. սպասաւորների մի ամբողջ խումբ զբաղուած այս
և այն կողմն էր վազում, կառավարիչը և տակաւապետը տալիս
էին իրանց հրամանները աջ և ձախ և այդ միջոցին տրլնգում
էին գոմէշները և մայում ոչխարները, որոնց հովիւները մօտ էին
բերում այն տեղին, ուր որ նրանց մօրթելու էին:

Մինչ կէս գիշեր շարունակուեց այս վազվզոցը և դեռ ևս
արեգակը պայծառ երկնքի վերայ չէր երևացել, երբ սկսուեց մի-
թերևս աւելի անհանգիստ և արագընթաց կեանք, որովհետեւ
նոր եկող հիւրերի թիւը քանի դնում աւելանում էր:

Հարսանեաց նախընթաց երեկոյին արդէն բոլոր աղգական-
ները և մերձակայ դրացիք համախմբուած էին Վարիպանիձէի
ընտանիքի շուրջը. եկած էր նոյնպէս ծերունի Գօնէլին և նրա
ամուսին տիկին Մարիամը և ծանր ու մեծ նստած էին երկար սե-
ղանի վերին զլուխը: Իբրև մի նահապետական զոյգ բոլորը նրանց
պատուում և յարգում էին և ով որ տեսնում էր նրանց իւր տու-
նը մտնելիս, օրհնում էր նրանց գալուստը, որովհետեւ համո-
զուած էր, որ նրանք հետները բարեբաղտութիւն են բերում:
Մերունի Վարիպանիձէն ներքին ուրախութեամբ լցուած էր,
տեսնելով պատկառելի ծերունիների զոյգին իւր սեղանի գլխին
նստած և բոլորի երեսներից նշմարեց, թէ սրբան ներքին և
ջերմագին մասնակցութիւն ունէին իւր ուրախութեանը: Սրբ.
գիշերային ընթրիքը աւարտոււմ էր, նուագախումբը կրկին
նուագեց նրան ձայնակցեցին օրիորդները հարսանեաց երգերով,
իսկ սրանց յաջորդեցին սէր և սիրոյ երջանկութիւնների գովա-
սանքները: Նոքա երգեցին:

Թռչնակ իմ սիրուն գնա նրա մօտ

Ասա որ նրան սպասում եմ,

Պատմիւ, որ հէզս գիշեր և ցերեկ,

Նրա տեսքին պապակում եմ:

Լուսին նրա ճանքէն լոյս տուր

Լեռն ու հովիտ լուսով ցօղիւր,
Ասա քեզ նման գունատուել եմ,
Որ նրա կարօտը երկար քաշի եմ:

Կէս դիշերին մօտ վարկալանիձէն բոլորին հրաւիրեց գնալ հանգստանալ և որովհետեւ սպասաւորներն էլ գնացին քնելու,— շուտով տան մէջ խողաղութիւն տիրեց: Նինօն նոյնպէս անկողին մտաւ, բայց ի գուր աշխատում էր քնել. քունը նրանից փախել էր, թէպէտ նա յագնած էր և անկարող էր աչքերը բաց պահել: Նրա անտարբերութիւնն այսօր նրան թողեց, մի սրտնեղութիւն անհանգստացնում էր նրան և նրա մտածմունքները սովորականից աւելի յամառ և լուրջ էին: Նա մտածում էր իւր ապագայի մասին, որ այն միջոցին նրան անհրապոյր էր երևում, որովհետեւ ինքը ամենևին չէր սիրում Լեւոն Չիգանուն, որը իւր կողմից սրա վերայ միայն մասամբ յարգանքի արդեցութիւն էր անում, մինչդեռ սրա սիրտը թողնում էր սառը, մինչև անգամ չէր զբաղեցնում սրա երեսկայութիւնը, ինչ որ ուրիշներին թէպէտ թափառանցի կերպով այնուամենայնիւ յաջողուել էր այդ բանը: Նրկար ժամեր նա պառկած մնաց առանց քնելու և քրքրում էր հին ու նորը: Ներքեում գաւթի մէջ աքաղաղները կանչեցին արդէն երրորդ անգամին իսկ քունը դեռ չէր եկել նրա արտեանունքի վրայ, որովհետեւ երբ սա մօտենում էր՝ նրա մաքերը կրկին իրանց գործն էին սկսում: Իսկուսը արդէն լոյս էր, պատուհանի ծածկոցի ճեղքից լուսոյ մի ճառագայթ ներս ընկաւ սենեակի մէջ ուղիղ այն պատի մօտ անկողնու վերայ, որի մէջ քնած էր Ռուսագան Լօմիձէն: Նինօն ակամայ նայեց այն կողմը և նախանձ զգաց թէ նրա քնին և թէ նորա հանգստութեանը: Նրա երեսը ամենևին ցոյց չէր տալիս որեւէ հոգս: Նա երեկ ասել էր, որ գոհ և երջանիկ է և այնուամենայնիւ իւր մարդուն չէ սիրում: Այժմ, նա չէր սիրում իւր ամուսնուն, այս բանն ասած էր նա իրան ինչպէս երեք ամիս, նոյնպէս էլ իւր հարսանիքից մի քանի օր առաջ:

—Նա ամուսնանում եմ նրա հետ, որպէսզի իմ խորթ մօրից հեռանամ, ասել էր նա:

Նինօն յիշեց այս խօսքերը ճշտութեամբ և երբ այժմ այդ մասին մտածեց և միևնոյն ժամանակ իրաներկայացրեց Ռուսագանին, լաւ տրամադրութիւնը և անհոգութիւնը, ինքն էլ սկսեց հանդարտել: Այն կեանքը, դէպի որ նա դիմում էր, պարզում էր նրա առաջին, նրա սրտնեղութիւնը կամաց կամաց անհետանում էր: Նա փակեց աչքերը և երբ արևի առաջին ճառագայթը մտաւ նրա սենեակը՝ վերջապէս նա քնեց:

Մեծ հայրը այսօր էլ ինչպէս և միշտ, առաջինն էր որ

երևաց ապակէծածկ սրահում: Նա հագած ունէր ձիւնաման սպիտակ բարակ ասուէից արխալուղ և նրա վերայ սև մետաքսէ մի կապայ: Նրա երեսը ուրախութիւնից փայլում էր և նա հաճութեամբ նայում էր դէպի ներքև տան գաւիթը, ուր սպասաւորները և ծառաները դադուած՝ այս և այն կողմէ էին վազվզում և ուրախ երգեր երգելով մեծ դռան յենարանները և սիւնները պսակներով էին զարդարում:

Շուտով սրահում երևաց նաև ծերունի Գօնէլին և ապա մէկ մէկու հետեցին միւս հիւրերը, որոնք երեկ կամ նախընթաց օրն էին եկել: Բոլորն էլ հագել էին իրանց հանդիսաւոր օրուայ զգեստները. ոմանք պարզ եւրոպական, ոմանք էլ նկարազարդ նախնի վրացականը, որոնք հեռուից ինչպէս ծաղիկներ իրանց գոյներով շողշողում էին: Մեծ դահլիճում, միւս սենեակներում, ապակէ սրահում և դուրսը ծաղկաբօտի վերայ մի իրարանցում տիւրեց և մի տեսարաններկայացաւ, որ խառնուրդ էր մատաղ և ծեր հասակներից, սև գոյնից մինչև սպիտակը, ճոխութեան և պարզութեան: Այն կանայք, որոնք վրացական զգեստով էին երևացել, հագել էին լայնադիր պայծառագոյն շրջագգեստներ, որոնց վերայ առաջներում սկսած գօտիից երկու լայն ծաղկանկար մէտքսէ ժապաւէններ էին կախ ընկած. նրանց գլուխները ծածկուած էին երկար ուսերի վերայ ձիւնաման սպիտակ քույրեր (չիկիւսներ): Նոցանից շատը գեղեցիկ էին, որովհետև առհասարակ մեծ մասամբ գեղեցիկ են տաք իմերէթիայի աղջիկները: Բայց նրանց բոլորի գեղեցիկութիւնը էլ դունատուեց, երբ նրանց մէջ մտան Նինօն և Բուսաղան Լօմիձէն: Երկուսն էլ հագած էին Փարիզի նորագոյն տարադի համաձայն, լի այբան ճաշակով նուրբ և գեղեցիկ, որ կարծես մի դիւթական զօրութիւն բոլորի աչքերը նրանց վրայ դարձրեց: Ոմանք փայլում էին ուրախութիւնից և հիացմունքից, ոմանք էլ մթազնում էին հեռից և նախանձից:

Դուրսը ապակէծածկ սրահում այժմ նուագում էր երաժշտական խումբը ողջոյն սալով առաւօտին: Իսկ դահլիճի մէջ սկսեցին ներկացնել հիւրերի բերած ընծաները: Նախ առաջ եկաւ արէզարդ Մարիամ Գօնէլին և հարմնացուին տուեց ոսկէշրջանակի մէջ դրուած Աստուածամօր մի պատկեր: Յետոյ Ճաւաշվիլի հօրաքոյրը տուեց մի զոյգ վրացական մարգարտեայ օղեր. մօրաքոյր Վէզիրի ձէն տուեց մի ապարանջան և երկու հատ պարսկական գորգեր, մօրաքոյր Բագրաձէն՝ մի թանկագին քօղ, Շիկվարիձէ այրին մի արծաթեայ բաժակ, իւր պառաւ ստնտուն (ձիձէն) մի զոյգ մետաքսեայ կօշիկներ: Ու-

ըիձէ դրացուհին՝ մի մութաքայ և այդ տեսակ իրեր տուին ուրիշները: Ոչ մի ազգական և ոչ մի մօտիկ բարեկամ դատարկ ձեռներով հարսանիք չէր եկած:

Միևնոյն ժամանակ հիւրերի թիւը հետզհետէ աւելանում էր, ամեն մի քառորդ ժամում երաժիշտները ողջունում էին մի նոր խումբի, որ ձիով կամ կառքով մտնում էին գաւիթը: Նինոյի հայրը դիմում էր ամենին մինչ սանդուղի գլուխը և ողջունում էր նրանց, որովհետև քաղաքավարի լինել և իւր ջնորհներ ցոյց տալ նա երբէք չէր մոռանալ, ևս առաւել այսօր: Աննշան և չքաւոր հիւրին էլ նա ձեռք էր տալիս և քաղաքավարութեամբ հրաւիրում նրան մտնել իւր տունը: Իսկ կանանց նա ընկերակցում էր մինչ դահլիճը և ամենքին իրան և իւրայիններին ցոյց տուած պատուոյ համար մի քանի քաղաքավարի խօսք էր ասում: Նա խօսում էր լցուած սրտով և լրջութեամբ, որովհետև նա զգում էր, որ ինքը լաւ խօսեց և այդպէս խօսելով իւր համար ծաղկէ պսակներ է պատրաստում: Ճաշից յետոյ երբ արեւը մօտեցել էր լեռների կատարներին, հեռուից երևաց նորափեսայի խումբը. ահա այդ ժամանակ վեց աղջիկ Նինոյի հետ մօտան նրա սենեակը նրա զգեստները հագցնելու համար:

Ամբողջ տան մէջ այժմ սկսուեց մի ուրախ տենդային շարժում. բոլորը աշխատում էին մտնել տան առաջնամասում գտնուած երկար ապակե սրահը, որպէս զի այդ տեղից կարող լինեն տեսնել նորափեսայի և նրա ուղեկիցների գալուստը: Գնացքի գլուխն անցած փրփրերախ ձիու վերայ սրարշաւ գալիս էր աւետարները: Նա ամբողջ Իմէրէթիայում յայտնի Լուարսար. Րբանէլին էր՝ մի բարձրահասակ և բարեկազմանձնաւորութիւն՝ որ իւր ուրախ տրամադրութեան պատճառով ոչ մի հանդիսից կամ ուրախութիւնից զուրկ չէր մնում: Նա հագած ունէր հին վրացական տարազով և սամոյրէ վզնոցով մանիշակազոյն թաւշեայ մի զգեստ, նոյն տեսակ սամոյրից գլխարկ և ոսկէ քամարից կախած ունէր մի գեղանկար սուր ոսկէ պատեանի մէջ: Նրա քամակից գալիս էին երաժիշտները և ապա հիւրերից աւելի մատաղահաս և հասակաւոր տղամարդիկ, որոնք համարեան բոլորն էլ զանազան գոյների հին վրացական զգեստներով էին և փայլուն սրերով ու խէնչալներով զինուած էին:

Այս երփներանգ խմբին հետևում էր մի երկձի նոր կառքի մէջ նորափեսայ Լեվան Զիզանիշու, նա, ինչպէս և մի քանիսը,

